Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N1

Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպությանը դրամաշնորհի տրամադրման

ք. Երևան «06» « փետրվարի » 2019 թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ «պետական մարմին»), ի դեմս կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող՝ Արմեն Ղուլարյանի, որը գործում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս տնօրենի պաշտոնակատար՝ Ռուբեն Արևշատյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, ղեկավարվելով «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» N 748-Լ որոշումներով, ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 08 բաժնի 02 խմբի 02 դասի «Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» ծախսային ծրագրի իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը, (այսուհետ՝ Պայմանագիր), հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում կատարել իր կանոնադրությամբ հաստատված գործառույթներն ու պարտականությունները՝ ճարտարապետության, քաղաքաշինության և շինարվեստի պատմության, տեսության, գործնականին, անհատ ճարտարապետների ստեղծագործություններին, նախագծային արվեստանոցների և ինստիտուտների, ոլորտի գիտա-ուսումնական հիմնարկների, ինչպես նաև արտերկրի և արտերկրի հայ ճարտարապետների գործունեությանը վերաբերվող տարաբնույթ նյութերի հավաքում, ուսումնասիրում, պահպանում, մասսայականացում, ցուցադրություն և այլ գործառույթներ (միջոցառումներ)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող՝

1.1.1 2019 թվականին կանխատեսվող ոչ ֆինանսական ցուցանիշների՝ հավելված N 1:

1.1.2 Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի՝ հավելված N 2:

1.1.3 Հանձնման-ընդունման ակտի՝ հավելված N 3 և աղյուսակ 3.1, որոնք կազմվում են ՀՀ ֆինանսների նախարարի 2010 թվականի մայիսի 18-ի N 346-Ն հրամանի համաձայն:

1.1.4 Ծախսերի նախահաշվի՝ հավելված N 4:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման դիմաց վճարումը կատարվում է դրամաշնորհի հատկացման ձևով՝ ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշման N 3 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 08 բաժնի 02 խմբի 02 դասի «Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» ծրագրով ՀՀ քաղաքաշինության կոմիտեին նախատեսված բյուջետային հատկացումների սահմաններում՝ **54,686.4** (Հիսունչորս միլիոն վեց հարյուր ութսունվեց հազար չորս հարյուր) հազար դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ, առանց որևէ սահմանափակումների ստուգել կազմակերպության կողմից սույն պայմանագրի կատարման ընթացքն՝ առանց միջամտելու վերջինիս կանոնադրական գործունեությանը (բացառությամբ օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված դեպքերի):

2.1.2 Վերահսկել սույն պայմանագրով կազմակերպությանը հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը:

2.1.3 ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ չընդունել իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 3.3 կետով նախատեսված տուգանքը:

2.1.4 առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.5 սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2 Պետական մարմինը պարտավորվում է՝

2.2.1. Սույն պայմանագրի պահանջներին համապատասխան՝ կազմակերպությունից ընդունել պատշաճ ձևով ու կարգով կատարված պայմանագրային պարտավորությունները:

2.2.2 Ստորագրել սույն պայմանագրի 1.1.3 ենթակետում նշված հանձնման-ընդունման ակտը՝ կազմակերպության կողմից սույն պայմանագրով սահմանված բոլոր պարտավորությունները պատշաճ ձևով կատարելու դեպքում:

2.2.3. Սահմանված կարգով կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական օգնություն:

2.2.4 Կատարել ծրագրի իրականացման մոնիթորինգ:

2.2.5 Իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 10 օրացուցային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը:

2.3 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.3.1 Պետական մարմնից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները պատշաճ ձևով և կարգով կատարված պայմանագրային պարտավորությունների դիմաց:

2.3.2 պետական մարմնի կողմից վճարման ենթակա գումարները պայմանագրով սահմանված ժամկետում չվճարվելու դեպքում՝ պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 ժամանակին, պատշաճ ձևով և կարգով կատարել սույն պայմանագրի 1.1 կետում նշված գործառույթները՝ ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների տարեկան արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո, միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը:

2.4.3 ՀՀ 2019 թվականի պետական բյուջեից տրամադրվող դրամաշնորհի նկատմամբ հաշվարկված ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների: Եթե վերը նշված հատկացումների շրջանակում իրականացվող ծրագրերը և միջոցառումները ենթակա չեն ավելացված արժեքի հարկով հարկման կամ ենթակա են հարկման պետական բյուջեից ավելացված հարկի վճարման համար տրամադրվող գումարի դիմաց ավելի փոքր գումարի չափով, ապա նշված հարկի վճարման համար նախատեսված հատկացումների գծով չօգտագործված գումարները 2019 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

2.4.4 Մինչև 2020 թվականի հունվարի 31-ը պետական մարմին ներկայացնել տեղեկատվություն սույն պայմանագրի շրջանակներում հաշվարկված և պետական բյուջե վճարված ԱԱՀ գումարների, ինչպես նաև Օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ մասի պահանջներին համապատասխան չօգտագործված և ՀՀ պետական բյուջե վերադարձված գումարների վերաբերյալ:

2.4.5 պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.6 կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.7 սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.8 սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.9 պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.10 ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ (Հավելված N 3, Աղյուսակ N3.1), համապատասխան մասնագիտական եզրակացության առկայության և պետական մարմնի ղեկավարի կողմից սահմանված կարգ լինելու դեպքում:

Կազմակերպությունը յուրաքանչյուր ամսվա ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում պետական մարմին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3, Աղյուսակ N3.1):

3.2 Պետական մարմինը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում կազմակերպություն է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2019 թվականի դեկտեմբերի 25-ը:

3.3 Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպության նկատմամբ կիրառվում է տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

4. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

4.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

4.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

4.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

4.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2019 թվականի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը:

5.2 Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումները պետք է ավարտվեն, և դրանց հետ կապված տարեկան արդյունքները պետական մարմնի կողմից ընդունվեն ու դրանց իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների/խնայողությունների չափը հաշվարկվեն մինչև 2019 թվականի դեկտեմբերի 20-ը: Ընդ որում, սույն պահանջի կատարման իմաստով որպես դրամաշնորհի պայմանագրով նախատեսված հատկացումների շրջանակներում տնտեսում/խնայողություն անհրաժեշտ է դիտարկել դրամաշնորհի պայմանագրով նախատեսված արդյունքին կամ նպատակին (ներառյալ սահմանված քանակական և որակական ցուցանիշները) հասնելու համար նախատեսված ռեսուրսների նվազեցումը/խնայողությունը:

5.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

5.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

5.5 Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N1, N2, N3 և N4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

5.6 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ՀՀ քաղաքաշինության կոմիտե» պետական կառավարչական հիմնարկ Հասցե՝ Կառավարական տուն թիվ 3 հ/հ 900011011815 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն հվհհ 02565827	**«Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ** Հասցե՝ Կառավարական տուն թիվ 3 հ/հ 900018003773 ՀՀ ՖՆ գանձապետական հաշիվ հվհհ 02506445
Կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող՝ Ա. Ղուլարյան Կ.Տ	**Տնօրենի պաշտոնակատար՝** Ռ. Արևշատյան Կ.Տ

Հավելված 1
«06» « փետրվարի » 2019 թ.
կնքված N 1 պայմանագրի

2019 թվականին «Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանխատեսվող ոչ ֆինանսական ցուցանիշներ

N	Ոչ ֆինանսական ցուցանիշի անվանումը	Ոչ ֆինանսական ցուցանիշի քանակը
1	2	3
1	Պահպանվող թանգարանային առարկաներ, քանակ	86000
2	Սպասարկվող թանգարանային այցելուներ, քանակ	12060
3	Թանգարանային առարկաների համալրում, թիվ	15042
4	Կազմակերպվող ցուցահանդեսներ, թիվ	11
5	Վերապատրաստումներ, քանակ	4
6	Վերապատրաստումներին մասնակցած մասնագետներ, քանակ	4
7	Վերապատրաստումների միջին տևողություն/ժամ	8

«ՀՀ քաղաքաշինության կոմիտե» պետական կառավարչական հիմնարկ
Հասցե՝ Կառավարական տուն թիվ 3
h/h 900011011815
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
հվհհ 02565827

Կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող՝

Ա. Ղուլարյան

Կ.Տ

«Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ
Հասցե՝ Կառավարական տուն թիվ 3
h/h 900018003773
ՀՀ ՖՆ գանձապետական հաշիվ
հվհհ 02506445

Տնօրենի պաշտոնակատար՝

Ռ. Արևշատյան

Կ.Տ

Հավելված N 2
«06» « փետրվարի » 2019 թ.
կնքված N 1 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծրագիրն իրականացնող հիմնարկի անվանումը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե,

Իրականացվող ծրագիրը՝ «02. Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ», Բաժին 08, խումբ 02, դաս 02

Դրամաշնորհ ստացող կազմակերպության անվանումը՝ «Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն

հազար դրամ

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2019 թվականի պետական բյուջեից, ընդ որում՝				Ընդամենը
		I եռամսյակ	Կիսամյակ	9 ամիս	Տարի	
1	2	3	4	5	6	7
Ընթացիկ դրամաշնորհներ պետական ոչ առևտրային կազմակերպություններին	4637	10,015.6	23,155.6	36,621.0	54,686.4	54,686.4

«ՀՀ քաղաքաշինության կոմիտե» պետական կառավարչական հիմնարկ
Հասցե՝ Կառավարական տուն թիվ 3
h/h 900011011815
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
հվհհ 02565827

Կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող՝

Ա. Ղուլարյան

Կ.Տ

«Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ
Հասցե՝ Կառավարական տուն թիվ 3
h/h 900018003773
ՀՀ ՖՆ գանձապետական հաշիվ
հվհհ 02506445

Տնօրենի պաշտոնակատար՝

Ռ. Արևշատյան

Կ.Տ

Հավելված 3
«06» « փետրվարի » 2019 թ.
կնքված N 1 պայմանագրի

Կատարող

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____

_____

հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____

_____

հվհհ_____

Ա Կ Տ Ն
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<_____>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<_____>> 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
_____(այսուհետ Պատվիրատու)՝
դրամաշնորհ տրամադրող << պետական կառավարման մարմինը
Ի դեմս_____ի և _____(այսուհետ Կատարող)՝
դրամաշնորհ ստացող իրավաբանական անձը

Ի դեմս_____-ի կազմեցին սույն ակտը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _____ 20___թ-ից __ _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Համառոտ նկարագիրը	Քանակը	Նվազագույն շահավետ գինը՝ մեկ միավորի հաշվարկով (դրամ)	Մեկ միավորի գինը (դրամ)	Մեկ միավորի համար տրամադրվող դրամաշնորհի չափը (դրամ)	Վճարման ենթակա գումարը (դրամ)	Վճարման վերջնաժամկետը՝ ամիս, ամսաթիվը
1	2	3	4	5≤3-4	6=2*5	7
Ընդամենը						

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
Ազգանուն, Անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
Ազգանուն, Անուն
Կ.Տ.

Հավելված 3
Աղյուսակ 3.1
«06» « փետրվարի » 2019 թ.
կնքված N 1 պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծրագրի կամ քաղաքա-կանության միջոցառման անվանումը	Չափորոշիչը (նկարա-գրությունը)	Չափորոշչի տեսակը	Ոչ ֆինանսական ցուցանիշներ					
			Ցուցանիշի հաստատված կանխա-տեսումը հաշվետու ժամանա-կահատվածի համար	Ցուցանիշի փոփո-խություններն ըստ համապա-տասխան իրավական ակտի (+/-)	Ճշտված ցուցանիշը հաշվետու ժամանա-կահատվածի համար (սյ 1+սյ 2)	Փաստացի ցուցանիշը (կատարված և ընդունված) հաշվետու ժամանակա-հատվածում	Հաստատված և փաստացի ցուցանիշների տար-բերությունը (սյ 4-սյ 3)	Տարբերության պատճառը (սյ. 2-ում նշված իրավական ակտերի հղումները և սյ. 5-ում նշված տարբերության պարզաբա-նումները)
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6

Աշխատանքը հանձնեց

ստորագրություն

Ազգանուն, Անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

ստորագրություն

Ազգանուն, Անուն
Կ.Տ.

Հավելված 4
« 06» « փետրվարի» 2019թ.
կնքված N 1 պայմանագրի

«Ա. Թամանյանի թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության դրամաշնորհի բաշխումն ըստ ծախսատեսակների

հազ.դրամ

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի անվանումները	NN	1 եռամսյակ	1 կիսամյակ	9 ամիս	2019 թ.
1	2	3	4	5	6
ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ		**10,015.6**	**23,155.6**	**36,621.0**	**54,686.4**
1.ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝ ԸՆԴԱՄԵՆԸ,		**6,748.9**	**16,872.1**	**26,995.5**	**40,493.1**
1.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ		**6,748.9**	**16,872.1**	**26,995.5**	**40,493.1**
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	6,748.9	16,872.1	26,995.5	40,493.1
2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ		**988.1**	**1,726.3**	**2,789.7**	**5,079.0**
2.1 Շարունակական ծախսեր, այդ թվում		**662.9**	**913.3**	**1,163.7**	**1,826.4**
Էներգետիկ ծառայություններ	4212	529.7	646.9	764.1	1,293.7
Կոմունալ ծառայություններ	4213	10.2	20.4	30.6	40.8
Կապի ծառայություններ	4214	123.0	246.0	369.0	491.9
2.2 Գործուղումների և շրջագայության ծախսեր, այդ թվում		**-**	**15.0**	**40.0**	**100.0**
Ներքին գործուղումներ	4221	-	15.0	40.0	100.0
2.3 Պայմանագրային ծառայությունների ձեռքբերում, այդ թվում		**117.0**	**363.8**	**775.4**	**1,589.4**
Համակարգչային ծառայություններ	4232	20.0	35.0	60.0	100.0
Տեղեկատվական ծառայություններ	4234	51.5	128.8	257.6	515.5
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	45.5	200.0	457.8	973.9
2.6 Նյութեր , այդ թվում		**208.2**	**434.2**	**810.6**	**1,563.2**
Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	73.6	184.0	367.9	735.6
Տրանսպորտային նյութեր	4264	10.0	25.0	50.0	100.0
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	124.6	225.2	392.7	727.6
7.ԱՅԼ ԾԱԽՍԵՐ		**2,278.6**	**4,557.2**	**6,835.8**	**9,114.3**
7.2 ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ՝ ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑԻՑ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ		**2,278.6**	**4,557.2**	**6,835.8**	**9,114.3**
Այլ հարկեր	4822	2,278.6	4,557.2	6,835.8	9,114.3

«ՀՀ քաղաքաշինության կոմիտե» պետական կառավարչական հիմնարկ
Հասցե՝ Կառավարական տուն թիվ 3
հ/հ 900011011815
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
հվհհ 02565827

Կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող

Ա. Ղուլարյան

Կ.Տ

«Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ
Հասցե՝ Կառավարական տուն թիվ 3
հ/հ 900018003773
ՀՀ ՖՆ գանձապետական հաշիվ
հվհհ 02506445

Տնօրենի պաշտոնակատար՝

Ռ. Արևշատյան

Կ.Տ